

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանի մէջ տեղաւորվում 10 կոպեկով.
Տէլեֆոն № 253.

ՀԱՅԿԵԱՌԻ ՀՈՒՑԵՄԱՐԻՆ

ԲՈՒՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Կիմայական բուժարաններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի քաղաքային ընտրութիւն-
ները. Մի փոքրիկ նմուշ. Մովսիսի միջնակարգ
ստանդարտական Բազում. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զօրայի թաղումը. Ար-
տաքին լուրեր. Հետազոտում.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մովսիս խորե-
նացի եւ նրա ընտանեակները.

ԿԼԻՄԱՅԱՆ ԲՈՒԺԱՐԱՆՆԵՐ

Օգտվելով յարմար առիթներից, մենք
մի քանի անգամ խօսել ենք կլիմայական
բուժարանների եւ սանատորիաների հիմ-
նարկութեան մասին Կովկասում: Մենք
ունենք լեռնային ընդարձակ տարածու-
թիւններ հարաւի ալպական օդով, մենք
ունենք հարաւի բուսականութեան հրա-
շալի խորշեր, ուր կարելի է անցկացնել
աշնան եւ նոյն իսկ ձմեռային ամիսները
բաց օդում: Մենք ունենք ծովափներ, ո-
րոնք կարողութիւն են տալիս բժշկել հի-
ւանդներին ծովային օդով եւ լողարաններով:
Ուրախութեամբ կարող ենք յայտնել,
որ կլիմայական մի բուժարան արդէն
պատրաստ է: Մեր խօսքը Մե ծովի արեւ-
ելեան ափի վրա գտնվող Գաղի կոչված
աղբում շինված Սանատորիայի մասին է:
Արդեւ միայնակ են մարտի եւ կազմու-
թիւնը ծովային օդը հարաւի կենսաբան օդի
հետ, ծովային լողարանները գեղեցիկ ձե-
ւով հետ: Այդտեղ յարմարութիւններ
են ստեղծված անդորր եւ առողջարար
կենք վարելու համար: Անկասկած փոր-
ձը կը սովորեցնէ մոցնել նոր եւ նոր փո-
փոխութիւններ բուժարանի մէջ եւ դարձ-
նել նրան յարմար տկարների բոլոր պա-
հանջների համար: Առաջին անգամ փորձը
կը թելադրէ բանալ այնուհետեւ նոյնա-
տեակ բուժարաններ թէ նոյն ծովափի
ուրիշ կետերում եւ թէ մեր լեռնային
այնպիսի բարձրաւանդակներում, ուր օդի
մաքրութեան հետ կցորդված են որոշ
աստիճանի օդի մեղմութիւն եւ ջերմու-
թիւն:

Եւրոպական սանատորիաների մէջ մա-
քուր եւ զուարթարար օդի հետ միասին
հիւանդները ստանում են օրինակելի խա-
մատարութիւն եւ հոգեպարտութիւն. կեն-
քը զրկված է որոշ կանոնների տակ, որոնց

կատարումը դարձել է պարտաւորեցուցիչ
բուժարանում: Առանց կուլտուրական այդ
պայմանների բուժարանները ինքն ըստ
ինքեան, միայն իրանց օդով ու ջրով, գեղ-
անկարող են այն օգուտը հասցնել հի-
ւանդներին, ինչ որ պահանջվում է: Ան-
հրաժեշտ է, որ կենցաղավարական բոլոր
պայմանները, բուժարանի ներքին կարգե-
րը ամեն կերպ նպաստեն, որ օդը, արեւ-
գույլը եւ բուսականութիւնը կատարեն ի-
րանց դերերը բաւարար կերպով եւ կազ-
դուրիշ ազդեցութիւն ունենան հիւանդ-
ների վրա:

Կլիմայական բուժարանները հարկաւոր
են թէ մեզ կովկասցիներին համար, որոնց
մէջ շատ կան հիւանդներ՝ կարօտ այդ
բուժարանների օգնութեան եւ թէ ուրիշ
անդից եկանքներ համար, որոնք իրանց
ծննդավայրերում չունեն այն յարմարու-
թիւնները, որ տալիս է Կովկասը իր հա-
րաւային դիրքով, իր լեռնային բնակարան-
ութեամբ, իր գեղեցիկ ծովափերով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՆԱԲԱՍԻՐ ԸՆԾՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակե՛ք հետեւել ռուս լրագրի փա-
տերին:
Ապրիլի 1-ին, թէ իրաւունքով են ձեռք բե-
րել հայերը մեծամասնութիւն Թիֆլիսի դու-
մայի մէջ եւ ինչ է պատճառը, որ, ընդհա-
նապէս, հայերը մեծամասնութիւն են կազմում
այդ դումայի մէջ—այդ իրողութիւնը այսպէս
է բացատրում ռուս լրագրը: Հայելի տիրա-
պետութիւնը Թիֆլիսի դումայում, ասում է
նա, պայմանաւորվում է այժմ գործադրվող
ընտրողական իրաւունքի, կամ 1892 թ. քաղա-
քային սահմանադրութեան անկառաւարութեամբ:
Թիֆլիսի խորեւանդները, արդէն արեւորդ-
ների եւ վաճառականների մեծամասնութիւնը
հայերն են. տեղական մասնաւոր կրէդիտային
հաստատութիւնները ստեղծվել են կառավար-
վում են հայերի ձեռքով—դրա համար են հա-
յերին է պատկանում ղեկավարող դերը ըն-
տրութիւնների ժամանակ եւ դումայում, որտեղ
մոռաք գործում են տանտէրերը, բանկիրները,
արդէն արեւորդները, առեւտրականները. նրան-
ցից է կախված, գլխաւորապէս, եւ քաղաքի
անտեսական գործունէութեան ուղղութիւնը:
Եթէ դիմե՛ք Անդրկովկասի ուրիշ քաղաքների

դումաներին, կը տեսնե՛ք, որ Բազում տի-
րապետում են պարսիկներ եւ թուրքեր (մեծ-
սուլթաններ), Երեւանում, Ալեքսանդրապոլում
եւ Գանձակում—հայեր, Գուլիստում եւ Փո-
թիում—վրացիներ, Բաթումում—նոյնպէս վրա-
ցիներ, թէեւ դումայի կազմութեան մէջ կան
ռուսներ, լեհեր, գերմանացիներ, յոյներ, թուր-
քեր եւ հայեր: Այդ քաղաքային դումաների
մէջ այս եւ այն ազգութեան տիրապետութիւ-
նը կախված է այն մի եւ նոյն պատճառներից,
որոնցից կախված է եւ հայերի տիրապետու-
թիւնը Թիֆլիսի դումայում:
Ուրեմն, եթէ հայերը մեծամասնութիւն են
կազմում եւ տիրապետող են հանդիսանում
Թիֆլիսի դումայում, որովհետեւ օրէնքի հիման
վրա նրանք ամենից շատ ցնց ունեն, այդ
այնքան օրինաւոր է, որքան վրացիների տիրա-
պետութիւնը նոյն օրէնքի հիման վրա Գու-
լիստի, Փոթիի եւ Բաթումի դումաներում:
Եւ սակայն հայերը երբեք չեն տրտնջում, չեն
բողոքում վրացիների այդ տիրապետութեան
եւ մեծամասնութեան դէմ, համարելով այդ
շատ բնական:

Տեսնե՛ք երկրորդ մեղադրանքը, այն է, որ
հայերը չեն մտածում քաղաքի շահերի մասին
եւ ի նկատի ունեն իրանց սեփական, քաղա-
քական շահերը:

Թիֆլիսի դումայում—ասում է ռուս լրա-
գիրը—ինչպէս, անկասկած, նաեւ ուրիշ դու-
մաներում, կայ դիմադրական կուսակցու-
թիւն, եւ արդարութեամբ պահանջում է անել,
որ այդ դիմադրական կուսակցութիւնը հէնց
հայերն են կազմում: Երբեք էլ միակողմանի
լինի Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը
իր ազգայնական եւ դասակարգային կազմով,
բայց նա ծախսում է իր բիւջէից 10% աւելի
ժողովրդական լուսաւորութեան վրա, նոյնպէս
եւ բժշկական եւ օմնիտարական մասի վրա,
իսկ դրանով պարծենալ կարող են նոյն իսկ
կենտրոնական Ռուսաստանի դումաներից շատ
քիչերը:

Ուրեմն, հայերը ոչ թէ հոծ, համախմբված,
թափաքայական մեծամասնութիւն են կազմում
դումայում, այլ նրանք են ընդդիմադիր կու-
սակցութիւն կազմողները եւ քաղաքի կենսական
շահերի մասին մտածողները:

Տեսնե՛ք երրորդ մեղադրանքը, իբր հայերը
քրքում են դումայից վրացիներին եւ ռուսներին
եւ աշխատում են, որ բոլոր ձայնաւորները
հայ լինեն:

Հետաքրքական առաջին յրջանում կատարված

ընտրութիւնները ցոյց են տալիս, որ այդ չըր-
ջանում 1070 ընտրողներ կային ցնց ունեցող.
այդ թւում հայերը՝ 460 հոգի կամ 43%, ռուս-
ները—380 կամ մօտ 35 1/2%, վրացիները—230
կամ մօտ 21 1/2%, իսկ ռուսները եւ վրացի-
ները միասին—610 կամ 57%: Ուրեմն առաջին
ընտրողական յրջանում ռուսները եւ վրացիե-
րը միացած՝ թուական առաւելութիւն ունէին
հայերի վրա, հետեւաբար, միասնակց հայերի
դէմ, նրանք կարող էին ոչ միայն անցկացնել
իրանց կանդիդատներին, այլ եւ սեւեռնել հա-
յերին եւ թոյլ չը տալ, որ մի հայ ընտրվի: Այդ
կարգը էր տեղի ունենալ, եթէ միայն քաղա-
քական հակառակութիւն լինէր մի կողմից հա-
յերի եւ, միւս կողմից՝ ռուսների եւ վրացի-
ների մէջ: Բայց, իրապէս, ահա ինչ պատա-
հեց ընտրութիւնների ժամանակ: Ընտրողական
ժողովին եկան 292 հոգի բոլոր 1070 ընտրող-
ներից կամ 27%: Այդ 292 ընդհանուր թւից
181 հոգի հայ էին, այսինքն բոլոր ընտրողների
39%-ը, 57 հոգի վրացի էին, մօտ 25% եւ 54
հոգի՝ ռուս, մօտ 14%: Ուրեմն ամենամեծ հե-
տաքրքրութիւն դէպի ընտրութիւնները ցոյց
առեցին հայերը եւ ընտրողական յրջանում
փոքրամասնութիւն կազմելով, ընտրողական
ժողովում մեծամասնութիւն կազմեցին. նրանք
62% էին, վրացիները 19% եւ ռուսները 18%:
Եթէ ռուսները եւ վրացիները իրանք այդպէս
անտարբեր վերաբերվեցին ընտրութիւններին,
այդ հօ չէ կարելի վերաբերել հայկական ինտ-
րիզներին:

Հետաքրքիր է այժմ քննել, թէ ինչպէս օ-
գուտ քաղցրին ընտրութիւնների ժամանակ
հայերը իրանց թուական գերակշռութիւնից եւ
արդեօք ազգայնական թշնամութիւնը այդտեղ
որ եւ է դեր խաղաց: Ինչպէս տեսանք, 181
հոգի հայ մասնակցեցին ընտրութեան. ենթադ-
րենք, որ նրանք բոլորը իրանց հայերին սպի-
տակ ըուէ գցեցին, ուրեմն նրանց ամեն մի
կանդիդատը պէտք է առնուազը 181 ըուէ օտա-
նար (քաղաքական մեծամասնութիւն—147 էր).
բայց իրապէս, հայ Փիրալովը օտաւար մի-
այն 164, Մելեքիշվիլը—162, Սուլիսանովը—149,
Սուրենեանը—155, Չալկիանը—119. հետեւա-
բար, հայերը բոլոր իրանց հայերին սպիտակ
ըուէներ չը տուին: Հայ Աւթաղիովը ստա-
ցաւ 194 ձայն, Արիսանովը—218, Բեհրուս-
ովը—186, Գուրիսանովը—205, Լիսիցեանը—202,
Փրիզովովը—218, Իլիսան Գ. Թուսանովը—238
ձայն. այդ թւերից երեւում է, որ հայերին
սպիտակ ըուէ գցել են ոչ միայն հայերը, այլ եւ

կատարել, այլ ինքը խաբվել է, կասկած չունե-
նալով, որ կեղծիքի հետ գործ ունի:

Սակայն ընտրատեսերի երկրորդ խումբը,
ինչպէս էմին, Գարաբաշեան, Կորբիլեր եւ Գ.
Խալաթեան ամեն ջանք գործ դրին ապաւո-
ցանելու, թէ Մար-Արաբեան աղբիւրը ոչ մի
ժամանակ գոյութիւն չէ ունեցել, թէ նա գրա-
կան կեղծիք է եւ այդ կեղծիք կատարող ինքն
Մովսէս խորենացին է, այսինքն խորենացին
ժողովրդական վէպերից, առասպելներից հիւ-
սել է իր պատմութիւնը (Ա. գիրքը) եւ նրան
վաւերականութիւն տալու համար վերագրել է
Մար-Արաբին, որ երբեք գոյութիւն չէ ունե-
ցել: Գ. Խալաթեան աշխատեց ապացուցանել
առհասարակ, որ խորենացին նոյն իսկ չէ օգտ-
վել ժողովրդական բանահիւտութիւնից, վէպե-
րից, զրոյցներից, առասպելներից, այլ կազմել
է իր պատմութիւնը օ. Գրքի եւ ուրիշ գրա-
կան աղբիւրների հիման վրա, այսինքն թէ
խորենացին լոկ մի բանաբառ է եղել, կոմպի-
լետոր:

Այս ընտրատեսերի ետեւից մի քանի ուրիշ
տեսաւունք ընտրատեսեր այնքան առաջ տարան
յարձակումները խորենացու դէմ, որ նրանց
գրչի տակից հայութեան ամենամեծ թերթողը
դուրս եկաւ մի խաբեբայ, գող, կեղծիքներ
յերբերող մարդ, որին կախին անգամ քիչ է:
Եթէ V-րդ դարի վերջի անտրժան, ազգա եւ
պորտաբոյժ հոգեւորականութիւնը, որի պատ-
կերը հիւանդի կերպով նկարել է Մովսէս խո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՒՎՍՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՒ ՆՐԱՔԱՆԱՐԱՆՆԵՐԸ

Арабское извлечение из сирийской хроники Мари-
беса. (къ вопросу объ истории Монсея Хоренского).
Н. Марш. 1902.

Արաբական քաղաքը Մարիբեսի միջնակարգ քրոնի-
կոնից (Մովսէս խորենացու պատմութեան հարցին վի-
րաբերելով). Ն. Մարի 1902.

I

Այս փոքր բրոշուրը, մի ընթերցան, որ պո-
թեօր Ն. Մարի կարդացել է այս տարի
փետրվարի 21-ին Ռուսաց Կայսերական Հնա-
գիտական ընկերութեան Արեւելեան բաժնի
մուտքի նիստում, որքան էլ փոքր է իր ծաւալով,
բայց հնագին յուզումներ պէտք է առաջ բերէ
բոլոր այն բանասէրների մէջ, որոնք սովոր էին
տեսնել հայոց ընթերցողական եւ հայկական Հնա-
գիտութեան ճանաչված Մովսէս խորենացու մէջ
միայն մի խաբեբայ, կեղծող եւ ստախոս:

Յայտնի է, որ Մովսէս խորենացին իր Հայոց
պատմութեան իրեւ գլխաւոր աղբիւրներից
մէջը յայտնում է Մար-Արաբ Կատիսայ կոչ-
ված մի ասորի գիտնականի պատմութիւնը,
որը, խորենացու ասելով, հայոց առաջին Ար-
շակունեան թագաւորի, Վաղարշապի պալատա-
կան պատմաբանն է եղել, Գրիստոսից երկու

դար առաջ: Մար-Արաբը իր պատմութեան
նիւթերը, դարձեալ ըստ խորենացու, քաղել է
Նինուէի գիւտնում գտնված մի գրքից,
որ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ քաղ-
դէական լեզուից թարգմանվել է յունարէն:
Յայտնի է նոյնպէս, որ Մար-Արաբեան այդ
աղբիւրը երկար ժամանակ թէ հայ եւ թէ եւ-
րոպական գիտնականների աչքում մեծ հռչակ
էր վայելում, սակայն 18-րդ դարից սկսած, երբ
խորենացու պատմութիւնը արեւմտեան-եւրո-
պական գիտնականների ընտանադատութեան նիւթ
դարձաւ, Մար-Արաբեան համաւաւոր աղբիւրն
եւս ենթարկվեց խիստ ընտանադատութեան, որը
միանգամայն յեղաշրջեց աւանդական հայեցող-
նրա ծագման եւ արժանահաւատութեան մասին:

Այդ ընտանադատութիւնը եկաւ այն եղբակա-
ցութեան, որ Մար-Արաբեան աղբիւրը մի գրա-
կան կեղծիք է, ուրիշ ոչինչ: Սակայն դալով
այն հարցին, թէ ո՞վ է կատարել գրական այդ
մեծ կեղծիքը, այդտեղ եւրոպացի գիտնական-
ները եւ հայ բանասէրները բաժանվեցին երկու
խմբերի: Ամենքը համաձայն են այն բանում,
որ Մար-Արաբեան աղբիւրը կեղծիք է եւ գո-
յութիւն չէ ունեցել այն ձեւով, ինչպէս ա-
ւանդում է խորենացին, այսինքն, որ խորենա-
ցու յիշած ժամանակ, Գրիստոսից երկու դար
առաջ, չէր կարող Մար-Արաբ անունով պատ-
մաբան լինել եւ Նինուէի գրաւորները գոյու-
թիւն ունենալ, քանի որ Նինուէն կործանված
էր Գրիստոսից 6 դար առաջ եւ եթէ գոյու-

